գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

23 նոյեմբերի 2018թ.
ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Մ. Դուրգարյանը
անդամներ՝ Տ. Պետրոսյանը, Մ. Կարապետյանը
քարտուղար՝ Ա. Ասատրյանը

**I. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների մասին**

------------------------------------------------------------------------------

(Մ. Դուրգարյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

Հրավերով սահմանված ժամկետում «ՌԵԱՔԻՄ» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերը:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից ստացվել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ եզրակացությունը, ըստ որի մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց ներկայացված փաստաթղթերը՝ մասնակցի կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը և գնահատման արդյունքում՝ հանձնաժողովը արձանագրեց, որ «ՌԵԱՔԻՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նկարագրում (հավելված 3) 1-ին չափաբաժնի համար ներկայացված տեխնիկական բնութագիրը հստակ նկարագրված չէ, իսկ 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար ներկայացված տեխնիկական բնութագիրը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Հիմք ընդունելով հանձնաժողովը անդամների կողմից իրականացրած գնահատումը հանձնաժողովը որոշեց.

ա/ «ՌԵԱՔԻՄ» ՍՊԸ -ի կողմից 2-3-րդ չափաբաժինների համար ներկայացված հայտը գնահատել բավարար:

բ/ կացեցնել նիստը մեկ աշխատանքային օրով՝ ծանուցելով «ՌԵԱՔԻՄ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել իր կողմից ներկայացված նկարագիրը՝ հստակեցնելով տեխնիկական բնութագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

4. Ներկայացված գնային առաջարկի և գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

ա/ «ՌԵԱՔԻՄ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչել 2-3-րդ չափաբաժինների համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

**II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին**

-------------------------------------------------------------------------------------------

(Մ. Դուրգարյան)

5. Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրա հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ ______________________ Մ. Դուրգարյան

անդամներ՝ ______________________ Տ. Պետրոսյան

______________________ Մ. Կարապետյան

քարտուղար՝

______________________ Ա. Ասատրյան